ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Մոլախիտ [1] ։

ԹՈՒՆԱՒՈՐ բուսոց մէջ ամենէն հռչակաւոր և զօրաւոր տեսակներէն մէկը սեպուած է նաև մոլախիտը՝ որ մեր լեռներուն մէջ Խնդամոլէ ալ կ'ըսուի ։ Մոլախիտը ընդհանուր իրեք ցեղ կամ տեսակ կը բաժնեն բուսաբանք. այսինքն Պղտէկ Մոլախիտ [2], Մեծ Մոլախիտ [3] ու Ջրային Մոլախիտ [4] ։ — Պզտի տեսակը մշակուած ու պարտէզի հողերու մէջ կը բուսնի. արմատը մատի հաստութիւն ունի, երկայնութիւնը մէկ ու կէս ոտք է, գոյնը ճերմակ ու հոտը գարշելի. ցօղունը բարակ է և երկու ոտքէն աւելի բարձր չըլլար. տերևներուն վերի երեսը մութ կանաչ գոյն մը ունի, իսկ վարինը ճերմակ ու փայլուն. ծաղիկն ալ ճերմակ է ։ Այս բոյսը զօրաւոր թոյն ըլլալուն ջղերու սաստիկ ցաւ կը բերէ. բոլոր մարմինը կ'ուռեցնէ և շատ անգամ ալ կը մեռցնէ ։

Մեծ մոլախիտը սովորաբար պարտէզներու, դաշտերու մէջ ու ճամբու վրայ խորտուբորտ տեղուանք կը բուսնի ։ Արմատը հաստ է, շատ ճիւղեր ունի որոնց կեղևը ճերմակ է ու դեղնի կը զարնէ ։ Իրեն ցօղունը 3 կամ 4 ոտք բարձր է ու բուռթ մատի չափ հաստ է ողորկ ու կլոր, վարի դին քիչ մը խոր է և վրան ալ կարմիր սպիներ ունի. որով ուրիշ բոյսերէն կ'որոշուի ։ Իրեն տերևները որ մեծ կարոսի [5] շատ կը նմանին՝ գարշահոտ են, գոյնը մութ կանաչ ու ողորկ, ճիւղերն ալ ցօղունին պէս կարմիր սպիներ ունին ։ Յուլիս ու օգոստոս ամիսներուն մէջ ճերմակ ծաղիկ կուտայ ։ Ինն ատենը աս մեծ մոլախիտը թոյնի տեղ տէրութեան դէմ յանցաւորները սպաննելու կը գործածէին. Սոկրատ երևելի փիլիսոփան ալ այս կերպով մեռցուցին. իսկ հիմայ դեղոց մէջ կը գործածեն դեղածախք չափով, և շատ հիւանդութեանց օգտակար կ'ըլլայ ։

Ջրային մոլախիտը Եւրոպա գըտնուած բոյսերուն մէջ ամենէն թունաւորն է. փոսերու, լճերու մէջ և ջրոտ տեղեր կը բուսնի ։ Իրեն ցօղունը 4 ոտնաչափէն աւելի բարձր է, մութ կանաչ ու մէջը երկու բթաչափ ծակ, իսկ ներսի կողմը ճերմակ է ։ Տերևները երկայն ու տարածուած են. յուլիսի ու օգոստոսի մէջ ճերմակ ծաղիկ կը բանայ ։ Իրեն թոյնը գլխաւորաբար արմատին մէջն է որ մեծ ու կլոր սոխ մըն է ։ Շատ զգուշանալու է զասիկայ ուտելէն, վասն զի շատ անգամ ուրիշ խոտերու հետ խառնուած ըլլալուն՝ մեծ մեծ վնասուց պատճառ կ'ըլլայ ։ Արմատը դրսէն ճերմակագոյն դեղին է, թէ որ ճղքելու ըլլաս մէջը շատ ծակեր կան որով կ'որոշուի իրեն նման բոյսերէն ։

Աղրոսակէ [1] Ռեյ [2] ղինել ։

ԱՐՍԱԿԸ որ կաթնեղէն կերակրոց մէջ խառնուելով՝ վանիլիայի պէս համեմ մը կը դառնայ, ոմանք թէյի տեղ ալ կը գործածեն աս կերպով ։

Դաւաթ մը վարսակը հինգ գաւաթ ջրով այնչափ կ'եփեն որ ջրին հինգերորդ մասին մէկը ցնդի. ետքը թէյի պէս կը խմեն, ու շատ համով ու մընդարար է, կ'ըսեն ։

1 Եռլոֆ ։ 2 Զայ ։

1 Լա. Conium. Գղ. Ciguë. Իտ. Cicuta. Տտ. Պուսրան ։

2 AEtusa Cynapium ըստ Լինն. Իտ. Cicuta piccola կամ Cicuta aglina.

3 Լա. Conium maculatum ըստ Լինն. Իտ. Cicuta maggiore.

4 Լա. Cicutaria aquatica. Cicuta virosa, ըստ Լինն. Իտ. Cicuta d' acqua.

5 Քէրէվիզ ։